





աշխատանքով վարում և գործում է հողը,— միմյանի իւր օրակայն ապրուստի համար, նա ղեկ ևս մինչև անգամ տեղեկութիւն չունէ թէ ինչպէս ուրիշ լուսաւորեալ ազգերը դիւրութեամբ և առանց ծանր աշխատանքի շատ կարճ միջոցում գլուխ են հանում այն գործը որը՝ երկար միջոց և դառն աշխատանք է արժուում իրան։

Իւր մտաւոր, գործնական և արհեստական գիտութեամբ, մշակ դասից բարձր չէ և առուեստաւոր դասը նոյն նահապետական հին դրութիւնը, նոյն անխորիս, կոշտ և կոպտ արհեստը, որի մէջ գտնվելիս է եղել իւրաքանչիւր արհեստի սկզբնապատճառը, նոյն նութեամբ փայլում է այդ դասի վրա։ Մշակի բնութեւնը անշուշտ տեղեկացած կը լինեն նորա 40 համարում տպուած առաջ նորոգող յօդուածից այդ դասակարգի վերաբերմամբ, այդ առթիւ այլ ևս աւելորդ է մեզ երկար խօսել մինչդեռ կովկասեան ամեն մի քաղաքում հայ արուեստագործները գործնական մի և նոյն դրութեան մէջ։

Այժմ քանի որ ոչ արհեստաւոր և ոչ մշակ դասը, կարող են ներկայումս նպաստել մեր ազգի բարոյական զոյւլթեանը, մեր յոյսը մնում է միայն ազգի առաւել բարձր, առաւել զարգացած այն է՝ վաճառականական դասի վրա. նորա պիտի լինեն մեր յայտնի ներկայացուցիչը քաղաքական ազգերի առաջ, նորա պիտի վերականգնեն մեր ընկած նշանակութիւնը միւս ազգերի մօտ, և մի և նոյն ժամանակ նորա պիտի լինեն մեր առաւել կոշ ուժը մեր միւս այն է՝ արուեստաւոր և մշակ դասակարգի։ Այս հարցի մասին քանիցս անգամ կրկնած են մեր պարբերական հրատարակութիւնները, որոնց գլուխում գրուածները կարծես ցնրած են օդի մէջ, որպէս ձայն բառարոյ յանապատի... Թող ներքին մեզ այստեղ մի քանի դիտողութիւններ անել մեր հայերի անցեալ և ներկայ վաճառականական կեանքից։

Հայկական տարադրութեան տխուր յիշատակները, կարծես չը կամենայով բռնաբարելով խորասկիւ հայի ինքնասիրութիւնը, աւանդում են մեզ հայի զաղթականութեան միակ պարճանքը այն է՝ նոցա առևտրական նախնիները ասպարէզը իրան շրջապատող աղբութիւններից։

Ինչպէս յայտնի է գլխաւոր զաղթականութիւնը հայերի կովկասի մէջ սխուժ է բազմապատկուած իշխանութեան կործանումից յետոյ, երբ աղա փախկեով բռնաւոր տիրապետութիւնի սրից, առաւել յարմար էին գտնում սահմանափակելու իրանց կովկասեան բարձրագագաթ շղթաների մէջ։ Ի հարկէ այն ժամանակ կովկասեան ազգաբնակչութիւնները լինելով առաւել անկիրթ, առաւել ստոր մտաւոր, դրութեան մէջ, հետոյ էր հայերին շուտով ձեռք բերել այդ երկրի վաճառականութիւնը։

Հայերը ամբնաւորվ կովկասի մէջ, նոցա վաճառականական ասպարէզը չէր կարող ընդլայնուել զեպի օտար մերձակայ սահմանները, քանի որ կովկասեան արքերը պատնէշ էին հանդիսանում նոցա հարգարկցութեանը հիւսիսային և արեւմտեան ազգութիւնների հետ։

Ռուսաստանում հայերը յայտնվում են գլխաւորապէս Պետրոս Առեւի ժամանակից, երբ այդ աշխարհաշէն ինքնակալը ուշք դարձնելով իւր ժողովրդի յառաջադիմութեանը, յարմար դասից ուրիշ ազգերի միջնորդութեամբ մի խթան պարտաւորել իւր ազգի մեծ մասի տգիտութեանց արթննալուն, և ահա այդ է գլխաւոր պատճառը որ հայերին ևս իբրեւ վաճառականական ազգի արտօնութիւններ շնորհից ազատօրէն պարագլուր առևտուրով հիւսիսի հետ, ի հարկէ հայերը այդ միջոցում օգուտ քաղելով թէ այդ և թէ նորանից յետոյ կրկնուած արտօնութիւն ներքից, տարածեցին իրանց առևտրական ասպարէզը Ռուսաստանի զանազան կողմերում և մինչև անգամ Ռուսաստանից դուրս։

Մի խօսքով հայերը այդ ժամանակ կարող էին մեծ դեր խաղալ վաճառականութեան մէջ մինչդեռ իրանց շրջապատող աղբութիւնները իրանցից բարձր մտաւոր դրութեան մէջ չէին գտնվում, նորա կարող էին լինել վաճառականների իրանց դարու ոգու համաձայն, գուցէ և նախնիների ուրիշ ազգերից։ Բայց այնուհետեւ երբ ժամանակի հոսանքը մարդկային մտքի համաճարի օգնութեամբ մի բնօրմական զարկ տալով, թէ վաճառականութեան թէ արհեստին և թէ հողագործութեան, հասցրին նոցա իրենց այժմեայ կատարելագործեալ դրութեանը, — հայերը չը հետեւելով լուսաւորեալ ազգերի յառաջնադարեան նախնիների յատկութիւններին, մնացին մի և նոյն հին վաճառականները, որոնցով այժմ լքն են կովկասի ամեն կողմերը։ Դարերի ընթացքները

չունեցան նոցա համար այն փոփոխական ազդեցութիւնը, որին ենթարկեցան ուրիշ ազգերը. նոցա սովորած լինելով հնադարեան վաճառականութեան ոգուն, որի օրէքները կայանում են միմյան հազարաւոր անուղիղ ճանապարհներով փող ձեռք բերելու, օգուտ քաղելով իրանց ստորադրեաների տգիտութեանց, յառաջ գնացին այդ ճանապարհով առանց աջ ու ձախ շեղվելու, խուլ միւս նայով բոլորովին ժամանակի պահանջման ձայնին, սակայն տարաբաղաւոր երկար չը տեւեց նոցա այդ դրութիւնը, լուսաւորեալ վաճառականական դասը ներս խաղաց և դէպի այն ասպարէզը ուր հայերը օգտվում էին այնքան տարիներից ի վեր, հիմնվեցին բնկերութիւններ, շինվեցին երկաթուղիներ և հաստատվեցին բանկաներ, հայը որ համարում էր իրան ամենից ճարպիկը վաճառականական խաբէբայութեան մէջ այժմ գտաւ իրա առաջ մի աւելի բարձր զարգացած ճարպիկ դասակարգ, որի բարոյական ճարպիկութեան տակ շուտ կարող էր ընկնլիլ նա։ Այն մասնաւոր հողերը, բնութեան զանձի այն ծածուկ շտեմարանները, որոնք մինչև այն րօպէն հայի համար անգործադիր էին, շուտով սկսան իրանց զանձերը արտադրել գործունէւ աշխատանքի համար։ Հայի համար այդ մի տխուր ներկայ էր և ապագան ցաւալի. անհէջներ թափուեցան երկաթուղիների, բանկաների և այլ ժողովրդական բարեկարգութիւնների հիմնարկների վրա, որովհետեւ բանկաների հաստատվելուց յետոյ այլ չէին կարող նորա ծանր, անմարսելի տոկոսներով հարստահարել խեղճ հասարակութիւնը, պակաս միաս չէր և նոցա երկաթուղու հաստատութիւնը, որովհետեւ եւրօպական վաճառականները փոխանակ երկրորդական ձեռքով վաճառելու իրանց ապրանքները ուղղակի իրանց կարող էին ներս բերել և առաւել օգտակար կերպով վաճառել այդ կերպով հայերի դրութիւնը օրրատօրէ ծանրանում էր, շատերը որոնք մութ ժամանակներում կարողացած էին ապահովվել իրանց վիճակը, բաւականացան միւս միայն տներ, քարավանարաններ շինելով նոցա կամոնտքի օգնութեամբ աղաւթ պահպանել իրանց ապագայի փորձանքներից, շատերն էլ մինչև այսօր արշինը ձեռքերին, սուտ երգումներ բերաններից թափելով, անցնող դարձողի զահրաններն են տանում։

Կրկնելով մեր հայ վաճառականների այժմեան դրութիւնը, մեք ուշք դարձնենք այն երեւոյթի վրա, ինչն է արեւօք պատճառը որ օտար երկրացի վաճառականներից շատերը, որոնք ոչ ժողովրդի սովորութիւններն ունեն, ոչ երկրի իրերը, և ոչ տեղի յատկութիւնների հետ ծանօթութիւն ունենալով կարողանում են փափուկ կերպով օգտվել մեր հասարակութեանց, իսկ տեղացի բնիկ վաճառականները, որոնք ստանալի ծախս անգամ գիտեն, այդքան յետադեմ գրութեան մէջ գտնուել, ինչն է պատճառը որ փրանսիացի իշխաններ, Տօլէնի մեծ գումարներով կարողանում են փող աշխատել, իսկ մեր վաճառականները ամեն օր գանգատվում են թէ աշխատանք չը կայ, խեղ բարաբաթը վերացել է և այլ։

Մենք վերեւ յիշեցինք որ մինչդեռ ուրիշ ազգերը ամենայն ջանք ի գործ էին դնում հիմաւոր և պատուաւոր վաճառականութեան տարածել իրենց ժողովրդի մէջ, և այդ առթիւ հիմնվում էին գործարանների ժողովրդի աւօրեայ պիտոյը արտադրող առարկաների, ուշք էին դարձնում գլխաւորապէս ներքին բերքը առաւել փութարկելու արտաքին բերքի հետ, երբ հողագործութիւնը ևս օրէցօր զարգանում էր, մեր հայերը սովորած լինելով միմյան իրարու հարստահարել, ուրիշ երկրների բերքերը երկաթուղի գնով իրանց հասարակութեան վրա վաճառել, անխորթ անելով իրանց երկրի բերքը որոնք մեծամեծ օգուտներ էին խոստանում աշխատող ձեռքերին, ուշք չը դարձրին երբէք հետեւելու նոցա օրինակին, և մնացին այսօր էլ հրէականութեանը յատուկ վաճառականներ, կամ պարզ կերպով ասել՝ այժմեան չարէիներ....

Ուրախաւ մի երեւոյթ է որ վերջին ժամանակներս մի քանի հայ վաճառականներ թօթափելով իրանցից հնադարեան փոշին հաստատեցին, թէ ևս օտար հողի մէջ, մի քանի գործարաններ բաց լինել օգուտ կարող են ունենալ այդ գործարանները մեզ համար, մինչդեռ մեր հասարակութեան ուսկիները պիտի քամեն օտար երկրի մէջ։ Վերջապէս մի քանի ծաղիկով էլ երբէք դարուն չի լինի, պէտք է ներգործել կենդանի մէջ։ Ինչպէս յայտնի է մեր հասարակութիւնը իւր ճարպիկութեամբ հայադարձելով ոսկիներ է վաճառում գործարաններին բոլոր այն թէ անձնական պիտոյը և թէ շուսյական ցանկութիւնները գոհացուցանող առարկաներ

համար, որոնք զարգարում են թիջիլի մահաղենները, ինչ օգուտ չէր ունենալ այդ հասարակութիւնը եթէ այդպիսի մի քանի գործարաններ հիմնվին և կովկասի մէջ անհղացի բնիկներից, որոնց արտադրութիւնը աղաւթ լինելով մարտից և ճանապարհի ծախսերից, կարող էին իրանց օգտակար և ժողովրդի ստորին դասի համար ևս գոհացուցիչ և մերձենալի լինել. այդպիսի մի հաստատութիւն պակաս օգտաւէտ ևս չէր լինի այն դասի համար, որ աշխատանքի ուրիշ միջոց չունենալով, ստիպվում է անամթաւ բար փողոցներում մուրալու։ Այդ առթիւ «Մշակը» ևս կրկնած է իւր ժամանակին։

Վերջացնելով մեր այս յօդուածը չենք կարող լուս. մնալ մի քանի համակերպի և այլ երկրացի հայ վաճառականների այս տառուայ Նիժնի-Նովոգորոդի տունավաճառում բռնած ապօրինի ընթացքի մասին, որոնք ռուս վաճառականներից ապրանք առնելով խոստանում են մի քանի օրուայ միջոցում իրանց հաշիւները կարգադրել սակայն մինչև հաշիւներ տեւեն, իրանց անյայտանում են, ով գիտէ ստանալի որ բուներ, ռուսներին ցոյց տալով թէ որքան հայերը ճարպիկ են խաբէբայութեան, անամթութեան և այլ այդպիսի նախնիներ անձականներին յարմար յատկութիւնների մէջ։ Չը մօտանալը ասել որ այդպիսի ազգապարճանք վաճառականները վաղօրօք կարգադրած լինելով իրանց մտադրութիւնը, բոլոր իրանց ունեցած ստանդուածները դարձնում են իրանց կնօք, եզրօր և ուրիշ ազգականների անուան։

Մ.

ՆԱՄՍԱԿ ՔԻՇԵՆՎԻՑ

Հոկտեմբ. 28.

Հոկտ. 8-ից սկսած այստեղ ձիւն է գալիս, և եղանակը բաւականին ցուրտ է։ Պատերազմի մեծ պատրաստութիւններ են լինում այստեղ, գլխաւոր բանակը զօրաց այստեղ պիտի լինի պատերազմի ժամանակին քաղաքից դուրս 240 հատ պէչեր (վաւարական) չինած են և 200 հոգուց աւելի անձինք սուլտարի (չորացած հայ) են պատրաստում զօրաց համար։ Եթէ Տաճկաց տիրութիւնը չընդունէր ութն շաբաթուայ հայտութեանը, այստեղ գալու էր Նորին Կայսերական Բարձրութիւն Կայսերաբայր Նիկոլայ Նիկոլայի վիշ իւր թիկնապաճ զօրքերով, որոյ կեդրութեան համար տուններ էլ պատրաստում էին։ Խոտը և զարին վերջին ժամանակները բաւական թանգացան։ Քաղաքումս առուստուր ամենին չը կայ կալուածատէրները, որք մի քանի տարի շարունակ երայտութեան պատճառաւ, մեծամեծ պարտուց ենթարկուել էին, այս տարի ևս առաւել խեղդուցան պարտքի մէջ։ Մեր հարուստ հայերը, բացառութեամբ միւր կամ երկուսի, ամենքն էլ նոյն խեղճ վիճակին ենթարկուած են. բաւական չէր որքան պակասել էր նոցանում ջերմեանադրութիւնը, բարեպաշտութիւնը և ազգասիրութիւնը, այժմ այդպիսի անյաւճողութեանց պատճառաւ բոլորովին անտարբեր են մնում դէպի ամեն մի ազգային գործ, ոչ եկեղեցի են գալիս, ոչ ուսումնարանի համար մի ուշադրութիւն են դարձնում և ոչ էլ դրանական օգնութիւն են անում, եկեղեցիներ, ուսումնարաններ էլ մեծ խեղճութեան մէջ են, ամսական մուտքը եկեղեցու չէ կարողանում ծածկել տիրացուած, պահապանի և ժամկոյի ռոճիկը, թող միւս կարեւոր ծախքերը՝ օրիորդաց դպրոցի, որը այս տարի օգոստոս ամսից փութադրեցաւ եկեղեցու բակում չինած նոր տան մէջ և նոր հիմանք վրա բացուեցաւ ջանքով և աշխատանքներով տեղւոյս եկեղեցու երեսփոխանի։ Ամեն կողմից անբաղաւթիւն, ջանքարեաց Նիկաբաթի տիկինը, որի համար հաղորդել էի «Մշակի» թէ արդէն պատրաստել է (պրօէկտ) նախագիծ ընծայելու տեղւոյս դպրոցին մի կալուած որ ունի արժողութիւն մինչև 20 հազար ռուբլ. և մտադրի է ուղարկել վեհափար Կաթողիկոսին ընդունելութիւն և ի հաստատութիւն, այժմ, զանազան պատճառներով, փութել է իւր դիտաւորութիւնը. նա իր կալուածքի արդիւնքով մի քանի հայ տաներ (СЕМЕНАТЫ) ունենալ է կամենում տեղւոյս գիմնադրայում, ուր ոչ հայոց լեզու և ոչ կրօն ուսուցանում են, և որից չը գիտեմ թէ ինչ օգուտ կարող է լինել տեղւոյս տաճկախօս հայերին....

\*\*\*

ՆԱՄՍԱԿ ԽՐԱԳՐԻՆ

Խաչակապ գիւղ. 28 հոկտ.

Պարբերական Հայ հրատարակութեանց մէջ մօտերումս պ. Եպիսկոպոսեանցի Գանձակից արած նկատողութեանց մասին Ս. Թարգմանչաց վաճա-

կան դպրոցի վերաբերութեամբ, պարտաւորութիւն եմ համարում երկու խօսքով պատասխանել, խոնարհաբար խնդրելով որ բարեհաճէք տպել ձեր լրագրի էջերում։

1875 թւականի յունիս ամսին պ. Եպիսկոպոսեանցը եկած է այցելութիւն մեր կառավարելիս դպրոցին, ոչ թէ իբրեւ տեսուչ, այլ իբրեւ հիւր, որի հետ կային և ուրիշ այցելուք։ Մասնաւոր հարցաքննութիւն անելէն զինի հիւրերը, ի թիւս որոց և պ. Եպիսկոպոսեանցը, գոհ մնացին դպրոցի աշակերտաց յառաջադիմութենէն, որոց մասին երկու տողով յայտնուած էր նոյն տարուայ յուլիսում ազգային թերթերից մէկում և այն գոհանակութիւնը մինչև ցօրս չէր հիշուած։—Ս. Թարգմանչաց վաճառական դպրոցի վերատեսչութիւնը, Վեհափառ Հայրապետից հաստատեալ կանոնադրութեանը համաձայն, յանձնուած է մեզ և ոչ թէ թեմական տեսչին։ Թող պ. Եպիսկոպոսեանցը նեղութիւն յանձն առնէ կարգաւ 1869 թ. մայիս ամսի տետրակը «Արարատ» ամսագրի։

Յայտնի բան է մենք չենք ստացած համալսարանական կրթութիւն, ուրեմն և չունենք պատշաճաւոր դիպլոմ, բայց զիւղական հայ մանուկների վրա ուսուցչութեան և մանկավարժական պաշտօն վարելու մասին, մենք ստացած ենք իրաւունքը երջանկալիչապա Մատթէոս կաթողիկոսից կնոդակաւ, ի 5 հոկտեմբերի 1860 ամի № 595.— Այս այն կաթողիկոսն է և ընդհանուր ազգի հայրապետը, որ ընտելով հանգուեալ Մ. Նաբալդեանցի հայոց լեզուից գիտութեան աստիճանը տուել էր նրան, կնոդակաւ, մագիստրոսութեան տիտղոս։—Ուրեմն համազգային հայրապետը կարող էր մեզ ևս տալ մանկավարժական իրաւունք՝ գէթ կրօնական զարգացման մէջ և մանր ուսմանը սովորեցնելու։

Մենք վարում ենք վաճառարկութեան և ուսուցչութեան պաշտօնը բարեհաճութեամբ և վերստին հաստատութեամբ այժմեան Վեհափառ Հայրապետի ամենայն Հայոց, Տեառն Գեղարդ Դ. և ըստ ինդրատուութեան խաչակապա հասարակութեան, որը տողուած է Նիսիսեալուպօլու հոգևոր կառավարութեան հրամանում, ի 13-ն նոյեմբերի 1872 ամի № 173, և այս վանից կառավարութիւնը ի 1867 ամի է յանձնուած մեզ։

Խաչակապ գիւղում չը կայ տղայոց ծխական դպրոց և ունենալու յոյսը շատ հեռու է, վասն զի ժողովուրդը չափազանց աղքատ է և տղայք ու աղկուէք ի միասին կարգալու դեռ չեն համաձայնում։—Քանի որ Բանանց և Փիլի գիւղերում չը կային դպրոցներ, մերձաւոր գիւղերից նաև Ղազախ-Շամաղիայ, Նոր-Բայազետայ և Սէքսանդրապօլու Արթիկ գիւղից (ուր մենք ծնուած ենք) կը դային մեզ մօտ և այժմ իսկ էլ կան աշակերտներ՝ հայոց լեզուով գրել, կարդալ, կրօնական կրթութիւն, երաժշտութիւն, քերականութիւն, Ս. գրոց թարգմանութիւն և թուաբանութեան չորս գործողութիւնքը սովորելու առաւել ուր և ից է սահմանն ալ վարձի կամ ուժ չիլի։ Բայց այժմ—գործիւն Աստուծոյ, բացվում են գիւղերում, թէ և շատ ծանր քայլերով և առանց հաստատուն ապահովութեան՝ ծխական դպրոցներ, որոց մէջ ընդունակ աշակերտաց շատերը (օրինակ Փիլի գիւղում) նախակրթական ուսումն հայոց լեզուի մեզանից են սովորած և համարվում են առաջին աշակերտներ։

Թէ որքան արդիւնաւոր է եղել մինչև ցօրս մեր կառավարելիս Ս. Թարգմանչաց վաճառական դպրոցը, բաւական ենք համարում ցոյց տալ, որ խաչակապ գիւղի օրիորդական դպրոցի վարժապետները 1874, 1875 և 1876 թւերում մեր աշակերտներից են եղել։ Նոյնպէս ունենք մենք բաւականին կարգաւ գրել և Ս. գրոց թարգմանութեանը հմուտ աշակերտներ մերձաւոր Չոլգաւ, Փիլի, Բարուս, Բարսում, Չաղիր, Բաղաբեդը և նոյն իսկ խաչակապ գիւղերում աւելի քան 70 հոգի։—Այլ քանդրապօլու Արթիկ գիւղում, նոյնպէս Նովոկայ Նիժ գիւղում 4—5 քահանայք, պատուելի գիւղականք, տանուտաւարք և վաճառականութեամբ պարագոյներ մօտ 60—70 հոգի մեր աշակերտներն են, որոց անունները, եթէ հարկ լինի, կը յայտնենք և նոցա կը վկայեն, որ «առ ու զք» սկսած մեզանից են սովորել և մենք այս գործով պարագում ենք 1855 թւականից սկսած։

Խաչակապ գիւղը վաճառական դպրոցից հեռի է ոչ թէ 3 վերստ, այլ 1 1/2 կամ 2 վերստ, ճանապարհ մաքուր է, որ և իցէ կեղտոտութեանց և զարչահոտութեանց։—Աշակերտները գիշերօթիկը չեն, այլ խաչակապ գիւղից երթեկեք են, բայց հեռաւոր տեղից եկողները գիշերօթիկը են և աղքատ ծնողաց զաւակուք, որոնք բացի մեզ վարձ չը տալ, շատ անգամ մեր հացովը կապրին։—Գանձակում աշակերտները 2—3 վերստ հեռաւորութեամբ ապականուած օդով և փողոցներով



կը գնան ուսումնարանը կարդալու, կարծեմ նոյնը ուրախութեամբ պէտք է անին գիւղացիք մի մաքուր ճանապարհով և օղով մինչև վանքը գալ ու գնալով, որոյ մասին մինչև ցորս մէկը տրտունջ չէ յայտնած:—Առանցիկները առաւօտ երեկոյ ժամերը գոթեմանը ներկայ և մասնակից են լինում, որը մեծ միջնորդութիւն է տալիս մեր նախապետական հայերէն, և այս բանը ոչ սակաւ նպաստած է դպրոցին տնտեսութեանը և նորա յիմնութեան հիմնովին նորոգութեանը ի 1875 և 1876 ամի օգնականութեամբ խաչակապայ բարեպաշտ ժողովրդականաց:

Մենք լսում էինք, բայց չէինք հաւատում, այժմ տեսնելով մի փաստ, որ մի քանի պարոններ աշխատում են փակել Վենափառի կամօք հաստատուած և հազար ու մի ներդրութեամբ մինչև ցորս հասցրած մի վանական դպրոց, որը ոչ մի տեղից արդիւնք չունի, բացի տարեկան 35—40 բուրլի ուսումնականաց արգելանքից և այն՝ սոյն 1876 թականի սկզբից՝ հրամանաւ Ս. Սինդիկ Էջմիածնայ:—Մենք ազգին ծառայելու և ազգի մշակ համարուելով, զոհած ենք մեր կեանքը ուսուցչական աշխատանքութեան և ոչ թէ պճնադարձութեան:—Եթէ Թարգմանաց վանքի դպրոցը կամայականութեամբ զոհ կը լինի, որ շատ ցաւալի է լսել և տեսնել աչքը, այնուհետև ուր որ կը հրամայի հոգեւոր իշխանութիւնը, այնտեղ, կը տեսնենք մեր պաշտօնը, թող ուրախանան վանական դպրոցի թշնամիքը սորա փակուելով, և սա վաղուց փակուած կը լինէր, եթէ սորա մասին խնամք չը տանէր գաղմակեցի մեծ Տէր-Ներսէսեանը: 1874 թականէն սկսած, որոյ համար ազգային թերթերը և Բաբուայ Մարգարիտական ընկերութիւնը իւր ժամանակին խօսեցած են մանրամասնօրէն, ինչ որ հարկաւոր է:

Այս բանի վրա մենք չենք էլ զարմանում, որովհետև հայոց մէջ դեռ դպրոցի հիմնարկութիւնը սկսվելով, սովորաբար նորա թշնամիքն են ծնւելում: Ինչ մեզ վերա ծաղրածութիւն անդնելը, հազարաւոր դեմաքներ մայրողները և տանաւոր վարժապետներ վարձողները ժամանակին աւելի արդիւնք ցոյց տան ազգին, քան թէ կարողացանք մենք ցոյց տալ առանց որոշ ուժի, այստեղից այնտեղից հայ մուրաւի, երբեմն սոված նստելով և համբերութեամբ տանելով մեր գործը, որքան կարող է տանել մի մոռացած հայոց խեղճ, հայածեալ և աշխատասէր վարդապետ...:

Մենք համաձայն ենք բոլորովին, որ վանքերում միմիայն սաղմոսեղծութիւն և մաղթանք կատարելով ազգը չի յառաջանայ, բայց յոյսով ենք, թէ մեր ազգայիններէն չափերը կը համաձայնուին, որ 19-րդ դարում վանքերի գոյութիւնը միմիայն դպրոցաց հաստատութեամբ պիտի պահուի ազգի համար կրօնական անդամներ պատրաստելու կամ այդ վանքերից ազգային դպրոցներին օժանդակելու նկատմամբ: Վանական և ծխական դպրոցած կանոնադրութիւնը բոլորովին տարբեր են, որի վրա հրաւիրում ենք մեծ տեսչի ուղարկութիւնը, որ իմանալով այսուհետև իւր իրաւանց սահմանը, որ վերջ ամենայն ամենապիտանաբար հրաւիրում ենք, և բարձրագոյն հոգեւոր իշխանութեան ուղարկութիւնը այս ծանր խնդրոյ վրա, որ զուրկուի գոյութիւնը ազգայնութեան մօտը առ այժմ գտնէ մէկ ուսուցչի լեզուի վարժապետի ուժի նշանակել մերձաւոր Զարեայ և Դաղդոցայ վանից արդիւնքներէն, որոնք չունեն և մէկ աշակերտ և գիւղական դպրոցներին չեն օժանդակում, բայց նոյնապ տարեկան մուսուրի հանում է մէկ մեծաքանակ դեմաքներ:—Եթէ ուսուցչական լեզուի վարժապետ չունենայ դպրոցը, այնուհետև սա առանց այն էլ կը փակուի ի միջնորդութիւն և ի պատիւ մի քանի կեղծաւորներէ, որ ցաւ է մտածել և տեսնել մեր դժբաղդ ազգի մէջ:

Թեոդորոս վարդապետ Շիրակեանի

ՆԱՍՏԱԿ ԽՄԲԱԳԻՆ

Թիֆլիս նոյեմբ. 15-ին

Ամսոյ 7-ին յօգուտ Հաւաքարու Ս. Մարիամեան ուսումնարանի տուած ներկայացումից ընդամենը գոյացաւ հարիւր յիսուն բուրլի, որից հանելով և օթմանստուն և հինգ բուրլի թատրոնի վարձը, վեց բուրլի սակիրիսն տուած վարձը տասն և հինգ բուրլի գերաստե Տէր-Վաղմեանի վարձը, և չորս բուրլի շորերի և այլ մանր ծախսած փողը, մնաց ուսումնարանին 50 բուրլի: Հրապարակապէս շնորհակալութիւն եմ յայտնում պ. պ. սիրողների խնամքին, որ մասնակցեց առանց վարձատրութեան այս գործում:

Խնդրեմ, յարգոյ խմբագիր, ձեր ՎՄՆԱԿ պատուական շարժմանը ձեր էջերում տեղ չնորհէք այս երկտող գրութեանս:

Տեսուչ Պողոս Քաթանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄՕՍԿԱՅԻՑ գրում են մեզ՝ Վոյնիսերի 2-ին լսելիքը այստեղի նախնական դատարանի վճիռը Առևտրական փոխտու Բանկի խաբարայութեան գործի մասին: Մարտեքերգին վճիռացաւ արտօրի արտասանման, զրկելով նրան Ռուսաստանում բոլոր սեփականացրած իրաւունքներից: Իսկ եթէ հայերէնը նրան չընդունի արտօրի նրան Օլոնեցկի նախադր: Դառու և Պոլսականի պարոններին ուղարկել Սիբիր (Տոմսկ նախադր): Բարիսովսկուն ուղարկել Օլոնեցկի նախադր, զրկելով նրան մի տարի այնտեղից հեռանալու իրաւունքից և վերջապէս Շուսթերին, Սոսկոլայի նախկին քաղաքագլխին մի ամսով բանտարկելով: Այդ հինգին էլ վճիռացաւ զրկել բոլոր սեփականութիւնից: Իսկ մնացածները ստացան արդարացուցիչ վճիռ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ գրում են մեզ թէ այդ քաղաքում թատրոնատերերի մի խումբ դիտաւորութիւն ունի մինչև մեծ պատը մի քանի ներկայացումներ տալ բարեգործական նպատակով: Ցանկալի է որ թատրոնատերերը օգուտ քաղէին անցեալից և եթէ հնար կայ ոչ մի ազգային ողբերգութիւն չը ներկայացնէին, որովհետև թէ հոգեւոր, թէ ձեռք այդ պիւնտաներում բաւական հնացած են և անյարմար են գրում թեմի համար:

Վերջապէս վրաց լրագրին գրում են իմէրէթից, որ այդ նախնայի գիւղերի մէջ տիրապետում են զանազան հիւանդութիւններ, մանաւանդ տիֆ և նուստիված հիւանդութիւնը, որից շատերը մեռնում են:

ՆՈՐ-ԱՅԱՒԱՐԱՒԱՐԻՑ գրում են նոյն լրագրին որ այդտեղ բացվել է նորերում մի փոխտու-կանայտական ընկերութիւն:

### ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵՐԲԻԱ

Նոյեմբերի 10-ից Բելգրադից հեռագրում են որ նախընթաց օրը բոլոր միմիայնները իրանց հրաժարական տուեցին, թէ և իշխանից նրանց հրաժարական չէ ընդունում: Բայց միմիայնները պնդում են թէ չեն կարող մնալ: Վաճառ է իւր թէ այդ հրաժարական տալու պատճառը կապով է զինեղալ Չէրնիաւի պահանջի հետ մասնակցել Սերբիայի միմիայնների խորհրդի մէջ ձայնի իրաւունքով:

ՆԱՍՏԱԿ ԳՈՒՍԻՑ

Հոկտեմ. 30-ին

Հայ լրագրութեան նախատնը եղող մի դժբաղդ եղելութիւն ձեռք հաղորդելու տեսնել պարտականութիւնն ունեմ:

Բայց մի քանի ամիսներ թէ Տաճկաստանի ամսական գաւառներում մէջ մինչև որ աստիճան յառաջ են գնացել բարբարոս տաճիկներու և վայրենի զորքերու տարաբաղդ հայերից դէմ գործած ամեն տեսակ յափշտակութիւնը, աւարտութիւնը, հարստահարութիւնը, առեւանգութիւնը, բռնաբարութիւնը, լիկաւը, խառնազանք և սպաննումներ և տակաւին խել մը չարիքներ որ մարդու մտքից չանցնել: Այս ամեն չարիք, ամեն օր գաւառներում մէջ տեղի կունենան, տեղեկագիրներ, բողոքագրութիւն և հանրագրութիւն մէկգլուցելու կը յաջորդեն, ազգային պատրիարքարանի գիւնդապետները զարման, չարաբարձաց պատմով կը պահանջեն Բ. Վաղմեան:—Բայց պատրիարքարանին ինչ է—պատրիարքն ո՞վ է—պատրիարքի իշխանութիւնը լոկ կրօնականին է, քաղաքականի մասին նա երբէք ձեռնահասութիւն չունի եղել—կասել անցեալները բարձրատեսան նախարար մի: Վայ է եկել հայ ազգի գլխուն, եթէ նախարար մը այս քաղաքարան ունի, ալ ևս հայոց պատրիարքը թող հազար անգամ Վաղմեան երկրի, կապքովին ներկայանայ և հարստահարութեանց հարմար խնդրէ, ում հոգ, հայոց ազգը խղճութիւն կը քաշէ, գաւառներում մէջ, այս կամ այն կառավարչի փաշայի քեֆն այնպէս կուզէ, ո՞վ կարող է անոր համար բողոք տալ—ոչ ոք—եթէ գտնուեցաւ մէկը որ այս բողոքը ընելու ճարպկութիւնը ունեցաւ ամեն վտանգ աչքը առնելով, շատ երջանիկ համարելու է վրէժը երբ փաշայի բարկութեանը չի մասնակցի:

Վերջին մեզ ինչ կը մնայ ընել:—Այս չարիքները լրագրներու միջոցաւ հրատարակել, որով կարելի կըլլայ թերևս մեր ցաւերը օտարներն իմանան և ուղարկութեան առնելով զարմանալ խորհին և Վրան առաջարկեն: Սակայն լրագրաց մէջ հրատարակութիւնն ալ տէրութեան գործին չը դարեղիր, ինչ կուզեն հապա—թեմերը խաչած են:

լած, դեռնեն թէ մէն ան ան ընկու է քեզ էլի ափնդում, էօմրինիւզ չօք օլտուն, փաթիլաշմըզ օք եաշարեն: այս եղանակ չողորթութիւններ ընելու է եղեր...

Պէտք է յիշել թէ տասնիններորդ դարու մէջ կապրինք, այս դարուն մէջ որ ճարձի և ջինի նման վայրենի և բարբարոս տէրութիւններն իսկ եւրոպական քաղաքակիրթ ազգաց օրինակներուն հետեւ կը ջնանան, տես թէ աստիճան կէս—եւրոպական այսինքն Տաճկաստանի տէրութեան մէջ ինչ վայրենութիւններ տեղի կունենան, նա մանաւանդ մամուլ գէտ, մամուլ՝ որ իմաստուն փիլիսոփայ մը լոյս անուրը կուտայ:

Կ. Պօլսի հրատարակուած հայ լրագրներէն «Արարատ», «Հայրենիք» և «Մէջնուայր Հաւատիս», Տրապիզոնէն հարստահարութեանց վերաբերեալ նամակներ կընդունեն և կը հրատարակեն (այս նամակին մէջ մասը ներփակեալ ձեռք կը դրկեմ), այս լրագրները ինչպէս սովորութիւն է, Վրան գրաքննական դեմք կը դրկուին և հոն աչքէ կանցուին, եթէ տէրութեան դէմ, կամ Թողուրդը ի չարս գրողող յօդուածներ ըլլան, դադարման կամ խափանման ենթակա կըլլան թերթերը, այս դեմքին անդամներէն մեզ գժբաղաբար մամուլայի խաթ էր համար հայոց աղը մամուլող հայ Վասակ մի ալ կայ:—ցաւելով կասեմ թէ այս չհայր երեսփոխան ալ ըլլալով ազգին իրաւունքները պաշտպանելու նուիրական պարտականութիւն ունի—այս անձը ոչ ոքն հայ լրագրները ձեռք առած կը գտայ այլ էֆէնդիլ պո. օլտուն, միլլէթ վէ տեօվլէթ խալիֆէի տիկէր պոլիտար, եւալմ շէյէր եւալմ օլտար, պո. կաղէթալար քաղաքաւ և այլն և հրաման կարձակէ ժանդարմներից որ երթան նոյն լրագրաց խմբագրները բռնելով տաթրաղամն տանին. անմիջապէս չորս հինգ ժանդարմներ խմբագրները առնելով կը տանին տաթրաղամն մօտ, տաթրաղամն կրակ կտրած ասոնց կը հարցնէ՝ օպու եաղաբ քաղաքը ուսնի մի տիւր մէքուկալարը ներսէն, ալտընը, իմզա վար մը՝ այս հարցմանց չէվլէթ էֆէնդիլ, կը պատասխանեն, մէքուկալար վար, իմզա վար՝ բայց ում կասես, արդարութիւն ուր է մնացել օպու իկաթի միլլէթ խալիֆէի, պաղն շու առաւարտն իւսթէրինի, թապանճա մապանճա օլտարն խեղճ խմբագրաց վրանից գլուխին կը խուզարկուի, գրպաններուն գտնուած բոլոր գրութիւնները մի առ մի կը քննուի և կը կարգադրի, բայց բարեբաղաբար որ և է քննադատ գրութիւն մը չը գտնուի: Այս խուզարկութիւններէն վերջը տաթրաղամն հրաման կընէ ոստիկաններուն որ այս մարդիկը բանտը տանեն, իսկոյն ոստիկանները ներս խուժելով խմբագրաց ձեռները ետին կը կապեն և ձեռները, գանձարեւոյ 1), ոճրագործ աւազակներու նման, գլուխներուն ֆէսը և ոտքերուն կօշիկը ամրութեւն յափշտակուած, կը տանեն բազմութեան մէջէն հանդիսաւորապէս բանտը դընելու, ասոնք բանտը քանի մի ժամ կ'ենան և վերջը տաթրաղամն հրամանաւ երախտաւորին առնուելով՝ կարձակուին: Արտաք ասից հետեցնել թէ, տաթրաղամն տալիքէն մէջ երբ խմբագրի մը կը ձեռուի, ալ ինչիւր ճիւղ կ'ընայ պատանի գաւառներում մէջ, Սիբիր հրապարկուի քահանային ձեռնուտը անկարելի կրնայ մի ըլլալ:

Այս ասոնք են Տաճկաստանի խոստացեալ բարենորոգումները, արդարութիւն, իրաւունք, օրէնք, հաւատարմութիւն բաւերը լոկ մտացածին են, նշանակութիւն չունին տաճկաց համար: Միւսինքն Պոլսը դարձել և ալ Ռուսիայի գաւառաց մէջ գործուած անգլիկանեանց դարձանքներուն վրայոց բանակցութիւններ տեղի կունենան, նոյն իսկ Տաճկաստանի կեդրոնին Պօլսի մէջ տաթրաղամն ձեռք այսպիսի գեղծումներ անպակաս են ամեն օր:

Այս ասոնք են, խմբագրի տէր, Տաճկաստանի ուժֆօրմները, այս ուժֆօրմները պէտք է որ դուք ալ ձեռք լրագրին միջոցաւ հրատարակէք և նոյն իսկ մինչև Բէթէրսուրի զրկէք այս բարենորոգման նախաշաղկիւր որպէս զի Տաճկաստանի վրայ յօդ տակաւին չը դիտուած բանի կան, յայտնուին և ամեն ոք գաղափար մը ունենայ անոնց վրա: Նամակ վերջացնելու մօտ խմբաց որ տէրութիւնը այդ գանակովեալ խմբագրները 2) Տրապիզոն է ուղարկել մի էֆէնդիլ (Ամէնք անուն) ընկերակցութեամբ, որպէս զի հոն անձամբ քննեն և ստուգեն քահանային գործը: Տար երկրից որ սուտ եղած ըլլայ, բայց եթէ դժբաղաբար իրաւ

- 1) խմբագրաց մի մինչև ցարի հրանդ ըլլալով նոյն ձեռներուն հետեւանքն, անկողնայ կը ծառայէ:
- 2) Բայց մէկէն որ հիւանդ է տակաւին, տէրութիւնը բժշկի զրկած էր հիւանդին վրձակը քննելու համար, բժշկը յայտնած էր որ հիւանդը միայն հարցուի եղած է և կրնայ ճամբայ երել, միւսինքն երկու հանրածանօթ զաւթիկներ հիւանդին ծանր վրձակը և անկողնէն չը կրնայ երել յայտնած են:

եղած ըլլայ, ինչ պիտի ընէ տէրութիւնը, այդ լրագրագրաց կրած հալածանաց ինչպիսի հատուցում ընելու է, և թէ լրագրաց դադարումէն գոյացած նիւթական կորուստը պիտի վճարէ տէրութիւնը,—ասոնց պատասխանելը դիւրին չէ, բայց սպասենք իրանց ելքին և անշուշտ պիտի գայ այդ օրը և ամեն բան յայտնուի:

Կը վերջացնեմ նամակս խնդրելով որ այս նամակի պարունակութիւնը ձեր մօտակալ թերթերուն միայն մէջ հրատարակէք ի գիտութիւն ամենեցուն, աւելի մանրամասն տեղեկութիւնք ապագային թողլով:

ՆԱՍՏԱԿ ՎԱՆԻՑ

Նոյեմբ. 1

Խնդրում էք զեւ ձեռք հայրենեացող աղէտայի անցքերը, ու գործերը—չը գիտեմ ինչ ասեմ և ինչ գրեմ, արդէն ի վաղուց տաճիկն աւելի կառաղաբար սկսած է իւր աւերածութիւնը, որ այս օրերը յաճախակի պատահում և լսվում է:

Նա հարստահարում է մեր երկրը, աւերում է մեր տները և անպատվում է մեր կրօնը, նա անխնայ գերում է մեր նորահաս կոյսեր և մանուկներ ու խախտում է նոցա անմեղութիւնն. նա բռնաբարում է մեր մայրերի ու հարսների պատիւը. նա զոհում է իւր արիւնքաբու սրին, մեր անտերունջ հայերի թուաւ որդիք, ծերունիներ սկսեալ մինչև ցամաքով:

Եթէ ինձ մօտ լինէիք այս վարկենում, ցոյց կը տայի ձեզ այն արիւնք, այն կարմիր արիւնք, որ զեւ ձեռք վրա մորմոք ու բորբոք տալով, կը վկայէ հայրենակիցներին, մեր քաղաքացի ու երկրացի եղբայրների հետ վրժառու ոգով, արիւնքով ու սրով վարվելու:

Այս, ալ բաւ է, հիւրիք է. յոյս, լոյս, խոհեմութիւն ու ապագայ գոչելով աւելի ևս ստրկանալը օսմանեան բարբարոս ճանկի տակը:

Արդէն մեր կանանց քանդեցին, մեր ընտանիքն, մեր հայրենիքն, մեր խաչ ու կրօն պղծեցին ու աւերեցին, ալ ինչու կենանք, ում սպասենք, ինչ յուսով մեր գաւառի հայի կեանք և պատիւն փչանալու և վերջապէս մօտ է, մեր կորստեան վերջի վարկեանն եկել հասել է, ալ կարող չեմք իմանալ, մեր սիրտը երկաթէ չէ, այլ մեր վիշտն ու ցաւն շատ ու շատ է, վերջապէս պիտի կըռուենք, ու մեռնենք բայց սուր ի ձեռիս:

Ա.

ՆԱՍՏԱԿ ԳԵՐՄԱՆԱՅԻՑ

Ստրասբուրգ, նոյեմբ. 9

Այս օրերս ստացայ «Восточный Восток» և ուսնելէն բրօշիւրը և բոլորովին համակրում եմ նրա գլխաւոր, ուղղութիւն տուող գաղափարին: Ամեն բան ինչ որ գալիս է Թիֆլիսից, ինձ մեծ ուրախութիւն է պատճառում՝ գիրք, լրագիր, նամակներ, որովհետև կտրված լինելով հայրենիքից և շատ զբաղված լինելով ես անցնում եմ միատեսակ կեանքս միակութեան մէջ: Թէ և կան այստեղ բացի ինձանից երեք հայ երիտասարդներ, բայց նրանցից երկուսը՝ պ. Էջմիւլ (բժիշկ) և պ. Թովման-Նիսեանցը (ֆիզիկոս) չուտով հեռանում են այստեղից: Կայ նոյնպէս մի երիտասարդ հայ պ. Էրեմ-մեսան, որ նոր է եկել այստեղ Երևանից: Պ. Աբի-սողոմ Թովմանիսեանց երեկ դոկտորի հարցաքննութիւն տուեց այստեղի համալսարանում և նրա աշխատանքը (Dissertation) շատ լաւ ընդունելով իւր գտած մեր պրոֆէսորներից: Եւ յիշում եմ պ. Թովմանիսեանցի հարցաքննութեան լուրը այն պատճառով, որ գերմանական դոկտորի աստիճանի ստանալը այժմ էլ յաճաղ պատահող երեկոյն չէ հայերի մէջ: Հայերից մեծ մասը ալ ևս չեն ընտան հարցաքննութիւն Գերմանիայում, ալ բաւականաւոր են մի քանի ժամանակ այստեղ մնալով և վերադառնում են, այն ինչ հարցաքննութիւնը, իմ կարծիքով, փոքր ի շատէ նշանակութիւն ունի, մանաւանդ երբ նա միաւորված է ինքնուրոյն մի աշխատանքի հետ: Ընդամենը 1869 թիւ աշունքից, ուրեմն իսկ տարու մէջ, գերմանական համալսարաններում հարցաքննութիւն բռնեցին միայն 8 մարդ Ռուսաստանի հայերից և անա 9-որդ պ. Աբիսողոմ Թովմանիսեանցն է:

Այժմ կը հաղորդեմ քանի մի նոր լուրեր, թէ հասարակական, թէ քաղաքական չըմաններից:

Երիտասարդ հայագէտ պ. դոկտոր Հիւրման պրոֆէսոր դարձաւ Լայպցիգի համալսարանում: Պրուսիայի վերջին ընտրութիւնները կրկին այն հետեւներն ունեցան, որ բազմութիւնը հաղթված է ազգային—ազատ ա մի տ (նաղիստալտիքիսալ)



կուսակցութեան, որոնք առ ժամանակ ոչինչ փոփոխութիւն չէ կարելի սպասել երկրի ներքին-քաղաքական կեանքում: Այստեղ լուրեր տարածվեցան, թէ թէ Գերմանիան դիտաւորութիւն չունի մասնակցել միջազգային կոնֆերանցիային արեւելեան խնդրի վերաբերութեամբ, որ պիտի հաւաքվի, ինչպէս լսվում է, Կ. Պոլսի մէջ: Դա ղեկավար հաւատարի լուր է:

Արեւելեան հարցը զբաղեցնում է ամբողջ եւրոպական հասարակական կարծիքը և լրագրութիւնը: Անգլիան կարծես իր սեփական ներքին հարցերը թողած, ցերեկ գիշեր արեւելեան խնդրի վրա է մտածում: Նորիւմում «Indépendance Belge» լրագիրը և նրանից յետոյ այլ թերթերը հաղորդում էին իբր թէ Անգլիան չէ կամենում բաւականանալ այն պահանջներով, որ պիտի անի Ռուսիան արեւելեան քրիստոնեաների համար և կամենում է որ ոչ թէ միայն Հերցեգովինան, Բոսնիան և Բուլղարիան ազատ ինքնավարութիւն (autonomie) ստանան, այլ որ նոյն իրաւունքները տրվեն թէ՛ սալոնային, Լիբիոյին և Հայաստանին:

Ընթերցողը գիտէ յիշում է իմ վերջին ճանապարհորդութեան ժամանակ գրած նամակը Տիֆլիսի զվիցերական կանտոնից, որտեղ ես նկարագրում էի այդ կանտոնի ազատամիտ և կեդրական կուսակցութեան մէջ ծագած երկպառակութիւնները: Այժմ լսվում է, թէ կանտոն Տիֆլիսի անկարգութիւնները ժամանակ, որոնք ծագեցան կղերականների դէմ ժողովրդից յարուցված շարժման պատճառով, այս ողորմելի կուսակցութեանը պատկանող պարոնները փախան մեծ բազմութեամբ դէպի Իտալիա և մասնաւոր լճաւար-

դիայում իրանց համար սպաստան են որոնում: Այս կեդրականներին յատուկ է՝ կամ վերին աստիճանի յանդուգն լինել, երբ նրանք զօրութեամբ իրանց կողմն են դրում, կամ երբ այդ այդպէս չէ, երբ կորցնում են իրանց ոյժը, այն ժամանակ նրանք չափից դուրս թշուառ և վախկոտ են դառնում: Այդ յատուկ է ամեն բուսակրական սկզբունքներին, որովհետեւ նրանք անընդունակ են աշխուրհ երկրով պատերազմելու իրանց պրինցիպների համար:

Իտալիայի ընտրութիւնները շատ յաջող են զբնում ազատամիտ կուսակցութեան համար: Երեկ յայտնի էր որ ընտրվեցան 208 ազատամիտ և 47 չափաւոր (moderati) պատգամաւորներ: Յոյս կայ որ ազատամիտները շատ մեծ բազմութիւն կը կազմեն և ուրեմն կը պաշտպանեն այժման միջխտրութիւնը:

Ա. Արծրունի

### ԻՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Գարձեալ մի հայ երիտասարդ ղզկտորի հարցաքննութիւն բռնեց Գերմանիայում: Մինչև այժմ ռուսահայտակ հայերից 1869 թից եօթ տարւոյ ընթացքում միայն 9 մարդ գերմանական ղզկտորի ատիճան ստացան՝ Գ. Արծրունի (քաղաքատնտես), Ա. Արծրունի (քնազէտ), Յ. Արեւիկեց (քնազէտ), Ս. Սպանդարեանց (կրտսեան), Մ. Մկրտչեան (բժիշկ), Ա. Յովհաննիսեանի (քաղաքատնտես), Յ. Անանով (քնազէտ), Իսախանով (բժիշկ) և վերջապէս Ա. Յովհաննիսեանց (քնազէտ):

## Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

### Մամուլի տակից զուրս եկաւ

#### ԲԱՌԱՐԱՆ

Ի ՌՈՒՍԱՅ ԼԵՋՈՒԷ Ի ՀԱՅ

#### РУССКО-АРМЯНСКИЙ СЛОВАРЬ

Աշխատասիրեալ Վ. Գարբիէի երեցփոխան Նորանոր փոփոխութեամբ և յաւելումով ի լոյս ընծայեալ յԱղէք: ՇԱՀԱՋԻՋԵԱՆՅ Գրին է 4 ռ. ճանապարհի ծախսով:

Միանգամից 20-ից աւելի օրինակ գնողներին լինում է զեղծութիւն իւրաքանչիւր հատին 50 կոպ:

Վաճառվում է Թիֆլիսում զլիստորայէն Շահազիզեանցի գրաւաձառանոցում, Միխայիլովի կամուրջ, տուն Միքայիլեանի և նմանապէս բոլոր գրաւաձառաների մօտ:

3 (3)

### ԱՐԾԱԹԵԱՅ ԻՐԵՂԷՆԵՐԻ

#### ՄՕՍԿՎԱՅԻ

գործարանը

Գ. ՎԱՅՆԳԱՐՏԻ:

Ընդունում եմ զանազան տեսակի պատուէրներ արծաթից՝ թէյի և սերանի սերվիքներ, եկեղեցական իրեղեններ ոսկեզօծ և առանց ոսկու, կարող եմ ոսկեզօծել արծաթով ծածկել և նորոգել հին արծաթեայ երեղեններ: Նոյնպէս ընդունում եմ պատուէրներ զանազան նշաններ գործելու՝ զիւղական տանտէրերի, անտառապետների, ոստիկանների, դատաւական ստորդիւնների և զանազան ընկերութիւնների համար գործարանների գներով:

Յոյս ունեմ որ յարգելի հասարակութիւնը գոհ կը մնայ ինչպէս պատուէրներով արծաթութեամբ այնպէս էլ աշխատանքի կատարման ճշգրտութեամբ և արագութեամբ: Հասցէն ԳՕԼՕՎԻՍԿԻ պրոպէկտի վրա, Անտոնովի տանը: 3 (6)

### ԱՏԱՄՆԱՐՈՅԻ ՎՕԼՅԱՍՏ

Բժիշկում է ԱՏԱՄՆԵՐԻ և ծնողի ցանկը, պըմբում է փտած ատամները ամենանոր միջոցով, որ հնարված է յայտնի Ղանգոգի Բ բժիշկապետից և կատարում է ամեն տեսակ օպերացիաներ ատամների վերաբերութեամբ: Գնում է չափաւոր գներով ԱՐՎԵՍՏԱԿԱՆ ատամների ուղղակի ձգականակաւ՝ չուկի վրա չինած, որ ընդունված է վերջին ժամանակները ամերիկական ատամնաբույժների ընկերութեան մէջ: Գ. ՎՕԼՅԱՍՏ, որպէս Թիֆլիսի միջտական բնակիչ, երաշխաւոր է իր աշխատանքների լաւ հետեւանքների համար: Նրա բնակարանը գտնվում է ԲՈՐԻՍԻՆՍԿԻ փողոցում, իշխանուհի Թուամանովի տանը, Ալեքսանդրեան այգու դիմաց: Ընդունում է հիւանդներին ամեն օր առատօտեան 9 ժամից սկսած մինչև 2 կէսօրի, իսկ երեկոյեան 3—6 ժամ: 7 (13)

ВЪ ТИФЛИСѢ У ПУРИНОВА

**DENTIFRICES RIGAUD**  
BOULEVARD MARCHÉ  
PARIS

8, RUE VIVIENNE, 8

На всемирной выставке  
в Парижѣ.



На всемирной выставке  
в Парижѣ.



**DENTIFRICES RIGAUD**  
(Dentifrice solide)

Входящая въ этотъ лексиконъ арника  
зубная паста, которая не только  
чиститъ зубы, но и оказываетъ благотворное  
влияние на дёсны, не представляя при этомъ  
никакой опасности. Нѣсколько капель  
этого средства можно прибавить къ  
обыкновенной зубной пастѣ, чтобы  
сдѣлать ея достаточно ароматною и  
даже въ случаѣ, когда она  
нѣсколько дней не была  
использована, чтобы  
сдѣлать её  
пригодною.

**ЖЕЛЪЗО ДОКТОРА ЖИРАРЬ**  
ПРОТОКЕЛАТЪ ИЗЪ ЖЕЛЪЗА  
(Одобренное Медицинскою Академіею въ Парижѣ.)

Это новое желѣзное средство отличается замѣчательнымъ свойствомъ не производя  
запоровъ и даже противуположительно возмущающее средство, весьма скоро возста-  
новляетъ силы, увеличиваетъ отъ избытка крови, употребляетъ при  
выздоравленіи послѣ трудныхъ болѣзней и для укрѣпленія силъ лица слабого и блѣднаго  
тѣлоздѣльца.

Желѣзо ЖИРАРЬ употребляется въ порошкѣ въ прѣмѣхъ 4хъ гранъ и въ формѣ  
драже (протокелатахъ) по 10 драхмъ, заключающихъ въ себѣ каждыя 2 грана.

ДЕЛО ВЪ ВСѢХЪ АПТЕКАХЪ РОССІЙСКОЙ ИМПЕРІИ.

**ФОСФОРНОКИСЛОЕ ЖЕЛЪЗО  
ДОКТОРА ФИЛОСОФИИ ЛЕРА**

Въ этой жидкости средство это содержитъ желѣзо и фосфоръ. Это одно изъ  
самыхъ лучшихъ желѣзныхъ препаратовъ и употребляется по предписанію  
врачей противъ блѣдной анеміи и болѣзней происходящихъ отъ избытка крови.

Каждый флаконъ изъ сего стекла имѣетъ выгравированныя слова: Phosphate de fer  
Lera et Compagnie. Изобрѣтатель докторъ Лера.

**ПРѢСНИВАНІЕ ИЗЪ МАТИКО  
АПТЕКАРЯ ГРИМО И К. ВЪ ПАРИЖѢ**

Въ прѣснѣе это, приготовленное посредствомъ переноски листьевъ перу-  
вианскаго дерева МАТИКО, употребляется по предписанію врачей противъ тошноты.  
Дело во всѣхъ главныхъ аптекахъ Россіи. — Изобрѣтатель поддѣлецъ.

ВЪ ТИФЛИСѢ У ПУРИНОВА

Ծախվում են **ԿՍԼՈՒՍԵՆԵՐ**, որոնք առաջ Օրբելեանի իշխաններին էին պատկանում, իսկ այժմ Բէզալի ժառանգուհիներին: Լայուածները բաղկացած են անտառից և արօտատեղիքից: Այդ հողերը գտնվում են Բէլի-Կիւիցից ոչ հեռու և հետեւեալներ են՝ Շահազադ, Պիտաբէտ, յետոյ՝ Պորոս-Կիւսան և արօտատեղիքը (Սաբալայի): Ամբողջ հողերի տարածութիւնը 8 դէսիատինից աւելի է, ծախվում են և մաս մաս:

Պայմանների և գնի մասին հարցնել ԹԻՖԼԻՍՈՒՄ, Իմանովի ընթերցարա- նում, պ. ԳՕՆԶԱՐՕՎԻՑԵ: 3 (3)

Հազարներ անձինքներից երկու սեռի իրանց գեղեցիկ ժողովրդ պարտական են միայն արտասահմանում վաճառվող այնպէս անուանված **ԲՈՒՍԱԿԱՆ ԽԻՆՕՎԻՑԵՐԻՆ** ՊՕՄԱՒԱՅԻՆ, որ մազերը բաւական և աւելի: Այդ պօմաղը բժշկական շատ հեղինակու- թիւններից փորձված է և ունի վայական թղթ- թերի պ. կիւնիսկուց որ վիճնայի Լանդգրիտի քի- միայն պրօֆէսոր է և նոյնպէս Մոսկույի բժշկական վարչութեան թղթաւթիւն: Նա ունէր մեծ աջողու- թիւն և վերջին ժամանակ հետազոտած էր Մոսկույի բժշկական վարչութիւնից որ տուեց նրան իր հաւանու- թիւնը: Կանոնաւոր գործածութեան ժամանակ, մինչև անգամ մազերից մերկ գլուխները ծածկվում լի մազերով: Այդ պօմաղը պնդացնում է կաշին, պահպանում է մազերը թափվելուց, մազերին առ- նեն է բնական տեսք և փայլունութիւն և իր անուշահոտութեան պատճառով, որ նրա լաւ յատկու- թիւններից մինն է, կարող է զարգարել ամենաշքիւ առաւելի սեղանը: Այդ բոլոր յատկութիւնները իմ արդիւնքի, իրաւունք եմ առաւել ինձ յուսալ Ռուսաստանումն էլ նրա ընդարձակ տարածման և պատուի հասարակութիւնից լաւ ընդունելութեանը:

### ԳԻՆԸ ՄԻՇԵԻՇԻ ՀԱՄԱՐ 2 ՐՈՒՐԼ

Իւրաքանչիւր շիշի հետ արվում է և պօմաղի գործածութեան նկարագրութիւնը:

Պ Օ Մ Ա Դ

"PASTA EUGENIE"

Այդ պօմաղի հնարող աի- կինը որ յայտնվեցաւ «Pasta» անունով, պատիւ ունի յայտնել յարգող հասարակութեան որ «Pasta Eugenie» այժմ ստաց- ված է և ծախվում է Թիֆ- Լիսում պ. ԼԱՆԿՈՒՍԻ մազի- կային մազազնկում, Արծրունու տանը, Վ. Լազիկի և Վ. Կառու- պ. ՍԵԳԱՆԻ մօտ, որտեղ ծախ- վում են և միացած այստեղ յիշված բոլորիւնքները: Այդ պօմաղը չանաւոր է նորանով, որ նրա գործածութեան կարճ ժամանակից յետոյ երեսը իս- տակվում է զանազան բեծերից:

ՄԻ ՍՐՈՒԱԿԻ ԳԻՆԸ 1 Ր. 60 Կ.

Որի հետ արվում է և նրա գործածութեան նկարագրութիւնը:

Իւրաքանչիւր սրտակի վրա ինչպէս մա- ղերի համար, այնպէս «Pasta» գտնվում է մի առանձին դրօշմ «Միսլի» պատկերով և հնարողի ստո- րապրութեամբ որի վրա առ- նաւորներն են:

### ՁԵՌՔԵՐԻ

Այդ պօմաղը այնպէս է պատ- րաստված, որ նրա գործածութեանից յետոյ ձեռքերը ստանան զարմա- յալի զգացում:

Սրտակի գինը 1 Ր. 30 կօպ:

ՄԱՋԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԸ, թէ մօլդ խարտեալ, թէ սե, որ ներկում է 10 րօպէի միջոցում և չէ կորցնում իր տեղութիւնը 6 շաբաթվայ ընթացքում: Արդիւնքը 3 րօպէ: ՏՕԿԱՅԻՆ ԲԱԼԱՍՏ, հաստատ միջոց կոյտերի և կաշու կոշտութիւնների դէմ: Սրտակը 60 Կ.: 34 (50)

Дозволено цензурою 17 Ноября 1876 г. Тифлисъ

Типография Энфиджянцъ и К<sup>о</sup>

Իւրաքանչիւր հարտարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԻՐՈՒՆԻ